

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2018Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

ԹԻՎ 9

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2018թ. հունվար-սեպտեմբերին

%

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՄԸՆ) երկու նիշ մակարդակ	2018թ.												
	հուն- վարը	փետր- վարը	մարտը	ապ- րիլը	մայ- իսը	հուն- իսը	հու- լիսը	օգոս- տոսը	սեպ- տեմ- բերը	սեպտեմբերը		հունվար- սեպտեմբերը 2017թ.	
	նախորդ ամսվա նկատմամբ									2017թ. դեկ- տեմբերի նկատմամբ	2017թ. սեպ- տեմբերի նկատմամբ	հունվար- սեպտեմբերի նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս- ընդամենը	102.8	99.5	100.1	99.7	99.0	98.4	98.8	100.6	100.3		99.2	103.5	102.6
<i>այդ թվում՝</i>													
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	105.8	98.8	99.9	98.8	97.2	96.1	97.1	101.7	101.2		96.3	105.3	102.4
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	100.0	100.4	100.1	100.3	100.6	101.3	100.4	100.3	100.1		103.6	105.0	104.3
Հագուստ և կոշիկ	96.4	98.1	101.5	102.5	100.8	95.7	96.6	97.7	102.3		91.5	100.4	104.4
Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկ- տրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	100.3	99.7	99.8	99.9	100.0	99.9	100.1	100.1	99.7		99.5	100.1	100.1
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործու- նեություն	100.4	100.4	99.9	100.2	99.7	101.2	99.4	99.6	99.5		100.4	101.1	101.7
Առողջապահություն	100.6	101.0	101.2	100.0	100.2	100.5	100.0	100.0	100.2		104.0	104.5	104.6
Տրանսպորտ	105.5	100.5	100.4	100.6	100.7	100.0	100.7	100.3	98.4		107.1	105.9	108.3
Կապ	100.0	100.0	100.0	99.9	100.0	100.0	100.0	99.6	100.0		99.4	99.4	99.8
Հանգիստ և մշակույթ	102.6	100.2	99.6	98.5	98.9	97.6	99.1	100.0	100.3		96.6	100.6	102.4
Կրթություն	101.1	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	101.2		102.4	102.4	102.4
Ռեստորաններ և հյուրանոցներ	100.8	100.2	100.2	101.1	100.5	100.4	101.6	100.0	99.5		104.3	105.1	103.5
Տարբեր ապրանքներ և ծառա- յություններ	99.9	99.9	100.1	100.3	99.8	100.4	99.7	99.9	100.0		100.0	99.9	100.1

**Սպառողական գների ինդեքսի փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում
ըստ սպառման հիմնական խմբերի**

%

	2018թ.												
	հուն- վարը	փետր- վարը	մարտը	ապ- րիլը	մայիսը	հուն- իսը	հու- լիսը	օգոս- տոսը	սեպ- տեմ- բերը	սեպտեմբերը		հունվար- սեպտեմբերը 2017թ.	
	նախորդ ամսվա նկատմամբ									2017թ. դեկտեմբերի նկատմամբ	2017թ. սեպտեմբերի նկատմամբ	հունվար- սեպտեմբերի նկատմամբ	
Սպառման ապրանքներ	104.1	99.2	100.0	99.4	98.4	97.6	98.2	100.8	100.8		98.5	104.9	103.3
<i>այդ թվում՝</i>													
սննդամթերք և ոչ ալկոհոլա- յին խմիչք (ներառյալ ալկոհո- լային խմիչք և ծխախոտ)	105.2	98.9	99.9	99.0	97.5	96.6	97.5	101.5	101.1		97.0	105.3	102.6
ոչ պարենային ապրանքներ	101.6	99.9	100.3	100.4	100.1	99.7	99.5	99.5	100.4		101.4	103.9	104.8
Ծառայություններ	100.4	100.1	100.3	100.2	100.2	99.9	100.1	100.1	99.4		100.7	100.7	101.3


Սպառողական գներ: 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձա-
նագրվել է 0.3% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 1.2%
գնաճով: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է սննդամթերքի (ներառյալ ոչ
ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) և ոչ պարենային ապրանքների՝ համապատասխանաբար 1.1%
և 0.4% գնաճ, իսկ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.6% նվազում:

2018թ. սեպտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.2%,
այդ թվում, սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ 97.0%, ոչ պարենային
ապրանքներինը՝ 101.4%, ծառայությունների սակագներինը՝ 100.7%:

2018թ. հունվար-սեպտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.1% (նախորդ ամսվա նույն ժամանակահատվածում գրանցվել է 0.2% նվազում):

Սպառողական գների հավելվածը 2009-2018թթ. սեպտեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



2018թ. սեպտեմբերին 2017թ. սեպտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 103.5%, այդ թվում, սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ 105.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.9%, ծառայությունների սակագներինը՝ 100.7%, իսկ հունվար-սեպտեմբերին 2017թ. հունվար-սեպտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 102.6%, 102.6%, 104.8% և 101.3%:


Հանրապետության դիտարկվող 4 քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ սպառողական գներն աճել են 0.1-0.7%-ով, 6-ում գրանցվել է 0.4-0.1% գնանկում, իսկ մեկում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.7%-ով:

Սննդամթերքի գներ: 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 1.2% գնաճ, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել բանջարեղենի, մսի, կաթնամթերքի՝ համապատասխանաբար՝ 2.2%, 2.3%, 4.9% գնաճը:

Բանջարեղենի ապրանքախմբում՝ 2018թ. սեպտեմբերին 2017թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 19.2%, իսկ 2018թ. օգոստոսի համեմատ՝ 2.2% գնաճ:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2016-2018թթ. հունվար-սեպտեմբերին

նախորդ ամսվա նկատմամբ, %



Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ բանջարեղենի գներն աճել են 0.1-6.6%-ով, 4-ում գրանցվել է 4.0-0.8% գնանկում, իսկ մեկում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում բանջարեղենի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ աճել է 3.5%-ով:

Մսամթերքի ապրանքախմբում 2018թ. սեպտեմբերին 2017թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 10.8%, իսկ 2018թ. օգոստոսի համեմատ՝ 2.3% գնաճ:

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ մսամթերքի գներն աճել են 0.2-3.6%-ով (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում), իսկ 3-ում գրանցվել է 0.3-0.1% գնանկում:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2018թ. սեպտեմբերին 2017թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 4.5%, իսկ 2018թ. օգոստոսի համեմատ՝ 4.9% գնաճ, ինչին մեծապես նպաստել է ձվի 26.2% գնաճը:


Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում գրանցվել է 3.0-6.5% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Իջևան և Կապան քաղաքներում: Մայրաքաղաքում կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի գներն աճել են 4.9%-ով:

2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ հանրապետությունում գրանցվել է յուղերի և ճարպերի՝ 0.1%, ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների՝ 0.1%, ձկան և ծովամթերքի 0.3%, հացաբուլկեղենի և ձավարեղենի 0.6% գնաճ:

Մրգի ապրանքախմբում¹ 2018թ. սեպտեմբերին 2017թ. սեպտեմբերի համեմատ արձանագրվել է 0.4% գնաճ, իսկ 2018թ. օգոստոսի համեմատ՝ 6.1% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2016-2018թթ. հունվար-սեպտեմբերին

նախորդ ամսվա նկատմամբ, %



Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ մրգի գները նվազել են 12.4-3.8%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում մրգի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ նվազել է 3.8%-ով:

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2018թ. սեպտեմբերին 2017թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 15.4%, իսկ 2018թ. օգոստոսի համեմատ՝ 0.7% գնանկում:

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ արձանագրվել է շաքարի և շաքարավազի 2.8-0.2% գնանկում, մեկում՝ 0.4% գնաճ, իսկ 2-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում շաքարի և շաքարավազի գները նվազել են 0.4%-ով:

¹ 2018թ. օգոստոս-սեպտեմբերին 2017թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:


2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ հանրապետությունում գրանցվել է սուրճ, թեյ, կակաո ապրանքախմբի՝ 0.5%, ոչ ալկոհոլային խմիչքի 0.3% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.4% գնաճ: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է դեղագործական ապրանքների՝ 0.6%, գրասենյակային պարագաների՝ 0.8%, բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի՝ 0.9%, տարբեր տեսակի կոշիկեղենի՝ 1.2%, գորգերի և հատակի ծածկերի՝ 1.5%, կահույքի և կահավորանքի՝ 1.8%, կենցաղային և այգեգործական գործիքների՝ 2.2%, հագուստի 3.0% գնաճ: Միաժամանակ, մաքրող, լվացող միջոցների և բնակարանի խնամքի այլ պարագաների գները նվազել են 1.5%-ով, կենցաղային փոքր էլեկտրական սարքերինը՝ 0.6%-ով, խոշոր կենցաղային սարքերինը՝ 0.4%-ով, ոսկերչական զարդերինը՝ 0.2%-ով, վառելանյութինը և քսայուղերինը՝ 0.1%-ով, իսկ ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գների մակարդակը մնացել է անփոփոխ: 2018թ. սեպտեմբերին 2017թ. սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 16.2% և 28.8%, իսկ 2017թ. դեկտեմբերի համեմատ՝ 9.3% և 23.3% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2016-2018թթ.

2015թ. նկատմամբ, %




Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.1-0.8%-ով (մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.6%-ով), իսկ 3-ում գրանցվել է 0.7-0.1% գնանկում:

Ծառայությունների սակագներ: Մատուցված ծառայությունների ոլորտում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սակագների 0.6% նվազում, ինչին մեծապես նպաստել է մարդատար տրանսպորտի ծառայությունների սակագների 4.9% նվազումը (պայմանավորված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 11.6% նվազումով): Հանգստի կազմակերպման համալիր ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են 0.1%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է սպասարկման ծառայությունների՝ 0.1%, բնակարանի նորոգման և սպասարկման ծառայությունների՝ 0.2%, իրավաբանական ծառայությունների՝ 0.2%, կրթության ծառայությունների սակագների 1.2% հավելաճ, իսկ կենցաղային սարքերի նորոգման, հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայությունների, կապի, բժշկական սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 1.0-0.5% նվազում, այդ թվում, նվազման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 0.6%-ով:

ՀՀ սպառողական շուկայում սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2018թ. հունվար-սեպտեմբերին


նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Արտարժույթի շուկա: 2018թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.3% հավելած (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2018թ. սեպտեմբերին 2017թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 0.8% նվազումն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.1% հավելաճով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է 1.7% և 1.0%: 2018թ. սեպտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 483.8 դրամ, ինչը գերազանցել է 2017թ. սեպտեմբերի համապատասխան ցուցանիշը 1.2%-ով (478.2 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2017-2018թթ. հունվար-սեպտեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների ինդեքսները ՀՀ-ում

%

	2018թ.			
	Օգոստոսը		Սեպտեմբերը	
	2018թ. հուլիսի նկատմամբ	2017թ. օգոստոսի նկատմամբ	2018թ. օգոստոսի նկատմամբ	2017թ. սեպտեմբերի նկատմամբ
Միրգ, ընդամենը	103.3	96.7	93.9	100.4
<i>այդ թվում՝</i>				
Խնձոր	100.4	116.6	92.3	130.6
Տանձ	87.4	86.1	96.6	123.9
Նուռ	95.3	255.2	68.1	94.2
Դեղձ	90.2	105.1	106.1	136.9
Սալոր	90.9	115.0	75.4	113.2
Խաղող	122.3	115.4	71.3	106.8
Աղամաթուզ (բանան)	99.3	76.7	103.5	84.9
Նարինջ	104.0	70.7	123.4	92.3
Մանդարին	110.6	58.8	87.8	54.3
Կիտրոն	100.9	96.3	101.1	97.8
Զմերուկ	94.7	196.1	71.1	123.4
Սեխ	105.7	222.7	91.8	188.1
Ելակ	115.4	97.1	109.9	111.7
Բանջարեղեն, ընդամենը	106.5	123.2	102.2	119.2
<i>այդ թվում՝</i>				
Կաղամբ	117.6	111.8	148.6	180.7
Ծաղկակաղամբ	104.4	145.2	103.0	153.3
Կանաչ սոխ	159.1	148.4	89.2	121.9
Խառը կանաչեղեն	137.2	147.1	92.7	120.0
Լոլիկ	98.2	141.9	147.7	222.4
Վարունգ	96.0	113.1	87.0	70.2
Սմբուկ	49.6	128.1	141.2	130.9
Պղպեղ	87.8	147.3	97.5	147.3
Կանաչ լոբի	107.1	154.1	87.8	101.2
Դդմիկ	193.0	216.3	58.5	131.5
Գազար	106.9	121.4	83.9	125.8
Ճակնդեղ	112.9	203.8	92.1	175.5
Գլուխ սոխ	81.1	85.8	91.4	94.1
Սխտոր	94.4	59.9	89.9	53.5
Սունկ	99.1	99.9	101.9	99.7
Կարտոֆիլ	121.1	128.2	91.8	101.9

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում¹

%

	2017թ. դետեմբերը 2016թ. դեկտեմբերի նկատմամբ	2018թ.								
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	օգոստոսը 2017թ. դեկտեմբերի նկատմամբ
<i>նախորդ ամսվա նկատմամբ</i>										
Ավստրիա	102.3	99.0	100.3	100.9	100.2	100.1	100.1	99.4	100.0	99.9
Բելգիա	102.1	98.8	101.6	100.0	100.4	100.3	100.3	99.3	101.4	102.2
Բուլղարիա	101.8	100.2	100.2	99.8	100.3	100.4	100.5	101.0	100.3	102.8
Հունգարիա	102.2	100.3	100.2	100.1	100.7	100.7	100.3	100.3	100.0	102.7
Գերմանիա	101.6	99.0	100.5	100.4	99.9	100.6	100.1	100.4	100.0	100.9
Հունաստան	101.0	98.8	100.1	101.2	101.0	100.1	100.9	98.6	99.8	100.4
Դանիա	100.8	99.7	100.6	100.0	100.6	100.2	99.9	100.8	99.5	101.3
Իռլանդիա	100.5	99.3	100.9	100.4	99.8	100.6	100.1	100.4	100.3	101.8
Իսպանիա	101.2	98.5	100.1	101.2	100.8	100.9	100.2	98.8	100.1	100.7
Իտալիա	101.0	98.5	99.5	102.3	100.5	100.3	100.2	98.6	99.8	99.7
Կիպրոս	99.6	98.1	101.2	100.9	101.1	101.4	101.0	99.8	101.2	104.7
Լատվիա	102.2	99.9	100.2	101.3	100.3	100.5	100.7	99.2	100.0	102.1
Լիտվա	103.8	100.0	99.9	100.4	100.7	100.5	99.9	99.5	99.6	100.5
Լյուքսեմբուրգ	101.6	99.1	101.2	100.0	100.4	100.6	100.3	99.1	101.4	102.2
Մալթա	101.3	98.8	100.6	100.9	102.6	101.4	101.3	100.2	100.7	106.6
Նիդերլանդներ	101.2	99.6	100.7	100.2	100.9	100.4	99.5	101.1	100.4	102.8
Լեհաստան	101.7	100.2	99.6	100.0	100.5	100.2	100.1	99.8	99.8	100.2
Պորտուգալիա	101.6	98.8	99.4	102.2	101.0	100.8	100.0	99.6	99.3	101.1
Ռումինիա	102.6	100.7	100.2	100.3	100.4	100.6	100.0	99.6	100.1	102.0
Սլովակիա	102.0	100.9	100.2	100.2	100.6	100.0	100.1	99.8	100.2	102.0
Սլովենիա	101.9	99.4	100.6	100.4	100.4	101.0	100.0	99.2	100.0	101.1
Սիլվեյա Թագավորություն	103.0	99.5	100.4	100.1	100.4	100.4	100.0	100.0
Ֆինլանդիա	100.5	99.7	100.5	100.2	100.3	100.0	100.2	99.8	100.1	100.9
Ֆրանսիա	101.2	99.9	100.0	101.1	100.2	100.5	100.0	99.9	100.5	102.1
Խորվաթիա	101.3	99.8	99.9	100.5	100.9	100.3	100.8	100.1	100.0	102.2
Չեխիայի Հանրապետություն	102.2	100.7	99.9	100.0	100.3	100.5	100.4	100.2	100.0	101.9
Շվեդիա	101.7	99.1	100.8	100.3	100.4	100.3	100.2	100.6	99.7	101.4
Էստոնիա	103.8	100.1	101.0	100.1	100.6	100.5	101.0	100.2	100.6	104.2
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-28)2	101.7	99.3	100.2	100.7	100.3	100.5	100.1	99.8	100.2	101.1
Հայաստան	102.6	102.8	99.5	100.1	99.7	99.0	98.4	98.8	100.6	98.8
Ռուսաստան	102.5	100.3	100.2	100.3	100.4	100.4	100.5	100.3	100.0	102.4
Բելառուս	104.6	100.8	100.9	100.8	100.3	99.7	100.4	99.8	100.1	102.9
Ուկրաինա	113.7	101.5	100.9	101.1	100.8	100.0	100.0	99.3	100.0	103.6
Ղազախստան	107.1	100.6	100.7	100.5	100.4	100.2	100.2	100.1	100.2	102.9
Ղրղզստան	103.7	100.6	100.9	99.7	99.5	99.5	99.8	99.3	99.6	98.8
Մոլդովա	107.3	100.0	100.2	100.1	100.5	100.0	100.0	98.8	99.8	99.4
Տաջիկստան	106.7	100.4	99.9	99.0	100.5	100.6	100.5	101.1	100.8	...
Վրաստան	106.7	100.6	100.2	99.6	99.8	100.0	99.4	99.7	100.5	99.7
Կանադա	101.9	100.7	100.6	100.3	100.3	100.1	100.1	100.5	99.9	102.6
Նորվեգիա	101.5	99.7	101.1	100.3	100.5	100.0	100.8	100.9	99.6	103.0
Բրազիլիա	102.9	100.3	100.3	100.1	100.2	100.4	101.3	100.3	99.9	102.8
Կորեայի Հանրապետություն	101.5	100.4	100.8	99.9	100.1	100.1	99.8	100.2	100.5	101.8
Չինաստան	101.8	100.6	101.2	98.9	99.8	99.8	99.9	100.3	100.7	101.3
ԱՄՆ	102.1	100.5	100.5	100.2	100.4	100.4	100.2	100.0	100.1	102.3
Թուրքիա	111.9	101.0	100.7	101.0	101.9	101.6	102.6	100.5	102.3	112.3
Շվեյցարիա	101.1	99.5	100.3	100.3	100.2	100.4	100.0	100.4	100.0	101.0
Ճապոնիա	101.0	100.1	100.0	99.7	99.9	100.1	99.9	100.1

... - Տվյալները բացակայում են:

¹Տեղեկատվությունը պատրաստվել է ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կայքում գեներալված «2018թ. օգոստոսին Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

² Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2018թ. հունվար-հոկտեմբերին» մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն «2018թ. թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի», նախատեսված է 2018թ. նոյեմբեր ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 67):